«Աջակցություն Հայաստանի Հանրապետության Կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին՝ փուլ I»

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Բազմաոլորտ
Տևողություն՝	4 տարի
Իրականացման ժամանակահատված՝	2012-2015
Ընդհանուր բյուջե՝	21 մլն եվրո
Բյուջետային աջակցություն՝	20 մլն եվրո
Լրացուցիչ աջակցություն՝	1 մլն. եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակներ. Աջակցել Հայաստանի կառավարությանը Եվրոպական հարևանության գործողությունների ծրագրի մի շարք ընտրված առանցքային ոլորտների իրականացման հարցում, նախապատրաստել ապագա Ասոցացման համաձայնագրի Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցություններին, ինչպես նաև բարելավել ընդհանուր տնտեսական կատարողականը կառավարման ու հաշվետվողականության շարունակական բարելավման շրջանակում:

Հատուկ նպատակներ. **Նպատակ I:** Շարունակել բարելավել Պետական ֆինանսական կառավարման համակարգերը:
Նպատակ II: Աջակցել պետական ոլորտի թափանցիկության ու կատարողականի բարելավմանը:
Նպատակ III: Աջակցել առևտրին առնչվող ոլորտներում ԵՄ ու միջազգային պահանջների կարգավորման դաշտի մոտարկմանը:

Բարեփոխումների շրջանակ.

- Գերագույն աուդիտի մարմնի (Հայաստանի վերահսկիչ պալատ) ինստիտուցիոնալ դերի հզորացում՝ Հայաստանի կառավարության կողմից ռեգիստրի ներդրման, ռեգիստրի կարևորության վերաբերյալ իրազեկության բարձրացման և բոլոր գրավոր ու էլեկտրոնային տարբերակներով ռեգիստրի հրապարակման առավել արդյունավետ եղանակի կանխորոշման միջոցով;
- Պետական ոլորտի հաշվապահական հաշվառման բարելավում՝ Հայաստանի պետական ոլորտի հաշվապահական հաշվառման սկզբունքների փաստաթղթավորման ու վերլուծության, ինչպես նաև պետական ոլորտի համար նոր հաշվապահական հաշվառման շրջանակի մշակում ու դրա

ներդրման համար օրենսդրական/կարգավորման շրջանակում փոփոխություններ կատարելու առաջարկ;

- Պետական ներքին ֆինանսական վերահսկողության շրջանակի ներդրում՝ Կենտրոնական ներդաշնակեցման բաժնի համար հատուկ կազմակերպական ու գործառութային նախապատրաստությունների կանխորոշման, ինչպես նաև բոլոր համապատասխան միջազգային կազմակերպություններին ու գործընկերներին Պետական ներքին ֆինանսական վերահսկողության ռազմավարության նախագծի շրջանառման ու ռազմավարության իրականացման նպատակով ժամանակացույցով Գործողությունների ծրագրի մշակման միջոցով;
- Պարտքերի կառավարման բարելավում՝ կարճաժամկետ ու երկարաժամկետ կառավարական արժեթղթերի տրամադրման ծավալների ու սահմանաչափերի որոշման, Պետական պարտքի կառավարման վարչությունների ներքին կառուցվածքի վերանայման ու օրենսդրության, կարգավորման ու Ֆինանսների նախարարության կանոնադրության մեջ անհրաժեշտ փոփոխությունների կատարման միջոցով, որպեսզի հնարավոր լինի ապահովել նոր վարչությունների ներդրումը;
- Պետական գնումների քաղաքականության ու օրենսդրական շրջանակի մոտարկում ԵՄ համընդհանուր օրենսդրությանը՝ պետական գնումների մասին նոր օրենքի կիրարկումն ապահովող կանոնակարգերի ընդունման միջոցով, ներառյալ՝ Բողոքարկման մարմնի ստեղծում ու դրա գործառույթների, կազմակերպական կառուցվածքի, աշխատակազմի պահանջների ու բյուջեի մշակում;
- Սանիտարական ու բուսասանիտարական քաղաքականության ու օրենսդրական դաշտի մոտարկում ԵՄ համընդհանուր օրենսդրությանը՝ տարբեր ոլորտներից փորձագետների աշխատանքային խմբի ձևավորման, ազգային հավանական ռիսկերի գնահատման ստանդարտների ու բուսական և կենդանական ապրանքների արտադրողների, ներմուծողների և արտահանողների վերահսկողության կանոնակարգերի մշակման, ռիսկերի վերլուծության իրականցման միջոցով՝ թիրախավորելով տարբեր հիվանդություններ, ներառյալ՝ նրանք, որոնք մտած են Կենդանիների առողջապահական համաշխարհային կազմակերպության ցուցակի մեջ;
- Առևտրի տեխնիկական խոչընդոտների շրջանակի մոտարկում ԵՄ համընդհանուր օրենսդրությանը՝ Որակի ենթակառուցվածքների բարեփոխումների ռազմավարության վերջնականացման ու Ռազմավարության մեջ մանրամասն ներկայացված բարեփոխումների արժեքի գնահատման միջոցով;
- Մտավոր սեփականության իրավունքների շրջանակի մոտարկում ԵՄ համընդհանուր օրենսդրությանը՝ համապատասխան մարմիններից ՄՍԻ վերաբերող հարցերի մասին տեղեկատվության հավաքագրման համար ընթացակարգերի ընդունման ու ՄՍԻ վերաբերող փաստաթղթերի տվյալների բազայի ստեղծման միջոցով: